




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրահանել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10671
ԱՄԵՐ.

6046

206

6/95

6/95

15009

ԿՈՄԵՏԻՍԱԿԱՆՆԵՐ

ՀՐԱՏ. ՀԱՅԱՍՏ. „ՄՈՂՐ“-Ի ԿԵՆՏ. ԿՈՄ.-Ի
ՅԵՐԵՎԱՆ 1924

5646



Պրակտիկական բույսերի յերկրներին միանալը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՄՈՊՐ»-Ի
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ԼՍԵՑԵՔ,

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐ

14009
A
47475
3KM



ՃԵՐԵՎԱՆ Տրեստի առաջին տպարան 1925 թ.

1945. 11-11-11. 11-11-11.

2

11-11-11. 11-11-11. 11-11-11.

11-11-11. 11-11-11. 11-11-11.

11-11-11. 11-11-11. 11-11-11.

11-11-11. 11-11-11. 11-11-11.

11-11-11. 11-11-11. 11-11-11.

11-11-11. 11-11-11. 11-11-11.



ՄԻԱՅՆ ԴԱՆԻՃՆԵՐԸ ԳԻՏԻՆ

(Բուլղարացի ընկերների մի նամակից)

«.....Դուք խնդրում եք, ընկերներ, հա-
ղորդել ձեզ մեր միության այն անդամների ա-
նուններն ու թիվը, վորոնք սպանված են, վիրա-
վորված ու բանտարկված սեպտեմբերի ապրա-
տամբությունից առաջ, այդ ապստամբության
ժամանակ ու հետո: Գիտակցելով այդ հարցի
կարևորությունը և անհրաժեշտ համարելով ծա-
նոթացնել ամբողջ աշխարհի պրուետարիատին,
վավերաթղթերի հիման վրա, այն անլուր տե-
աորին, վոր գործադրեցին ցունկիատները Բուլղա-
րիայի Յերիտասարդության կոմունիստական Մի-
ության դեմ, մենք դիմեցինք մեր դավառա-
ցի ընկերներին, այցելեցինք մասսայական ջար-
դերի վայրերը, և այնուամենայնիվ զրկված
ենք ձեր հարցին պատասխանելու հնարավորու-
թյունից:

Բուլղարիայի կոմյերիտմիությունը չի կա-
րող գտնել յուր զինվորների գերեզմանները: Նը-
ստանց տեղը միայն դահիճները գիտեն: Յեվ այս

պատճառով քիչ տեղեկություններով ենք շատանում այս նամակում:

Նվագագույն հաշիվներով ցանկիստների և Վրանգելի ավագակախմբերի ձեռքով սեպտեմբերի ապստամբության ժամանակ և հետո մորթված, գնդակահար և կտոր—կտոր արված կոմյերիտականների թիվը հասնում է 350—400-ի, Վորոնյից մինչև 30 հոգի խոշտանգված ապանված են բանտերում, չորսը խելագարվել են, բրահաբարված և ապա սպանված են շատ աղջիկներ... Բուլղարիայի բանտերում տանջվում են մինչև 200 կոմյերիտական... Բայց կրկնում ենք, վոր հնարավորություն չունինք ձեռքիակատար տեղեկություններ հաղորդելու:

Մի բան միայն կարելի չե բացարձակ վրատահությամբ ասել—այդ տեղեկությունները շատ ավելի բառմանելի կը լինին, քան այն, ինչ վոր հիմա մենք հաղորդում ենք ձեզ, և ցանկիստների վոճրագործությանց ամփոփումները գարշելիության, ստորության և տմարդի անգթության կողմից միջնագարյան պատմության ամենամռայլ եջերիցն իսկ գերազանց կը լինին:

Ընկեր Ս-ն ուղարկել է ձեզ ինքնասպան չեղած մի սպայի հիշատակարան *), վոր պատ-

*) Տես «Պաղ գենդով» հատվածը:

Քիչ արշավախմբերից մեկի ղեկավարն է յեղեւ-
 Սկիւթ ուղարկուած ենք մի լնկերոջ հիշո-
 ղությունները, վոր առաջ սոցիալ դեմոկրատա-
 կան կուսակցութեան անդամ էր, իսկ սեպտեմ-
 բերի առաջից հետո, իրեն դրել է մեր միութեան
 արածադրութեան տակ: Այս հիշատակարանը *)
 ձեզ շատ բան կստե սեպտեմբերից հետո յե-
 կած որերի մասին:

ՍԿԻՍԻՆԱ ՎՐԱՆԳԵՐԻ ՍԱԿԱՆԵՐԻԿ

Տասնևութ հոգի էին նրանք: Առաջներեցը
 գնում էր Վրանգելի սպաներից մեկը, կողքնե-
 րիցն ու հետևներից՝ Վրանգելի զինվորներ:

Գերիների թվումն էր մի սղջիկ: Չեմ աը-
 խալվի, յեթե ասեմ, վոր 17 տարեկանից ավե-
 րի չէր նա: Հիշում եմ. վզովը մի սպիտակ շարժ
 քցած՝ ձեռներով բռնել էր ծայրերը: Գնում էր
 ասուլի, կարծես չէր կասկածում, թե իրեն
 մահու պատիժ է սպասում:

Այն ինչ՝ ամեն բան պարզ էր. գերիների
 վետեից գնացող չորս զինվոր բահեր էլին տա-
 րում — յուրաքանչյուրը յերկու լերեք հատ: Բա-
 հերն իրար ելին առնում և այնպես էլին զրըն-
 ցում, վոր յես հեռվից լսում էյի նրանց ժան-
 ցոտ ձայնը:

*) «Տես սպիտակ վրեժխնդություն»:

Դատապարտվածներին տանոււմ էին շտապե-
լով դեպի գետը, վորի ափերին բուսած դեղնա-
գույն թփերի մեջ սինն էին տալիս զնդակա-
հար հեղափոխականների յեղբայրական գերեզ-
մանաթմբերը:

Ձեւ մոռանա մի մանրամասնություն: Նա-
յոււմ էյի հեռադիտակով և տեսա. դեռատի հե-
ղափոխական աղջկա բաց սեաներ դիւին յե-
րեկոյան արևի տակ մի փոքրիկ ժապավենի կապ-
եր կարմրին տալիս: Անմեղ ու հուզելու չափ-
քնքուշ, նրա կարմրությունը մի հեզ, գրեթե
մանկական բողոք էր այն զազանաբարո մուկ-
նության դեմ, վորի հազար ու մեկերորդ գոր-
ծողությունը պիտի կատարվեր կես ժամից
հետո...

* * *

Ձինվորներից մեկը բահով մի քառանկյունի
գծեց գետնին, և մի տաանյակ բահ միավեցին
սեահողի մեջ: Հարթավայրի վրա արագ բարձ-
րանոււմ էր մի լայն, սև հողաբլուր:

Գերիները, միմյանց սեղմված՝ մի քարա-
ցած խոււմբ էին կազմել, նայում էին դեպի
ցած, գետի վոսկեծուփ դողդոջուն աահանքին և
կարծես անտանելի վշտալից, տխրազին հայտնու-
թյուններով լի, միայն իրենց տեսանելի և մի-

այն իրենց համար բաց մի մատյան — եին կար-
գում: Յեւ թվում եր, թե մի արտամաշ վշտով
եին համակված այն պահուն— թե ինչո՞ւ վոչ
բառիկադներ չվրա, վոչ դասակարգային
թշնամու հետ կատաղի կովի բռնված, վոչ ըն-
շագուրկ մասսաների ցաակոտ ապստամբության
ժամին, այլ Ռուսաստանի խորտակված բուր-
ժուազիայի գաղանացած զինվորների գնդակնե-
րի տակ պիտի հեռանան կյանքից, այն կյանքից,
վոր սկզբից մինչև վերջը նվիրված ե յեղել յեր-
կրի բանվորներին, գյուղացիներին ու բաւորակ-
ներին:

Այն ժամին յես մի բացառիկ սուր ցավ
զգացի, թե ինչ ծանր բան ե հեղափոխականի
համար բանտում, տանջանքներից, կախաղանի
վրա և գնդակահար լինելով մեռնելը: Չարչա-
րանքները չեն սարսափելի, — սարսափելի ե,
վոր կատարյալ անզորությունդ ես զգում, սարսա-
փելի ե, վոր անգործ ես կյանքիդ այդ վերջին
րոպեններին, վոր հատկապես նշանակալից ես
թվում:

Այն ժամին յես հասկացա մի պարզ ճշմար-
տություն.

Հեղափոխականին մահը վայել ե միայն կովի
մեջ, միայն իր դասակարգային թշնամու դեմ
մղած անխնա պայքարում...

* * *

Նրանց հերթով բերում ելին հողաբլրի մոտ:

— Ծունկ չոքիր—գոռում եր սպան:

Վոժանք հանդարտ ծունկ ելին խոնարհվում,
 սյուսները դեռ չչոքած՝ տասնավոր գնդակներից
 վայր ելին ընկնում սևահողի վրա և, կարծես
 միտք անելով՝ գլորվում ելին հողաբլրի վրայից
 խռտի վրա...

* * *

Գերեզմանի առաջ մի պատանի յե կանգնած.
 նրա շեկ գանգուր մազերն ընկնում են դեմքի
 վրա. նա ձեռքով մազերն ուղղեց, ձեռքը գլխին
 քսեց, հետո վեր բարձրացրեց, տարորինակ
 ալրախուժյամբ գոչեց ամբողջ կրծքով.

— Կեցցե աշխատավորների հաղթանակը...
 Յե՛վ կրծքիցն ու քթարմատիցը վերք ստանալով
 ընկավ գերեզմանի մեջ:

* * *

Վերջինը աղջիկը պիտի մեռներ:

Սպան կիսաձայն մի բան ասաց զինվորնե-
 րին, վորոնք սարսեցուցիչ ժպիտներով պատաս-
 խանեցին նրան. սպան ու լերկու զինվոր աղջ-
 կանը տարան թփերի մեջ, և 2 3 րոպեից հե-
 տո պնդուկենու թփերի միջից մերձիմահ սարսա-
 փի, հուսահատ դիմադրության ճիչեր լսվեցին,

—հետո ավելի ցած, իսկ ելի մի րոպեից հետո
բալորովին դադարեցին...

Ձինվորներն ականջ ելին դնում ու անհամ-
բերությամբ նայում ելին այն կողմը, վորտեղ
ծնվում ու մեռնում ելին անգորությամբ՝ հան-
գալիս տքոցներ, և շարվում ելին հերթի...

*

*

*

Ճյուղերը կոտրատելով, ձեռներս չանգրտե-
լով մի կողմ վաղեցի, դեպի գետը:

Յերբ արդեն մյուս ամիսն ելի, հեռվում
հրաքանների ձայնը լսվեց: Գիտեի՝ գերեզմանի
մեջ ընկավ կարմիր կապով ակահեր գլուխը:

«ՊԼՂ ԶԵՆՔՈՎ»*)

Մի ժամանակ յես «համլետականութունը»
ինտելիգենտական անճարակության ամենավատ
տեսակն ելի համարում: Բայց րստ եության
մինչև կյանքիս վերջը յես ինտելիգենտ մնացի,
թեկուզ դահճի դերում: Կյանքը, մղձավունջալի
գիշերները «ինքնավերլուծումն» են պահանջում:

*) Մի անհայտ ապացի հիշատակարան, վոր
մի ժամանակ սույիալ — դեմոկրատ և յեղել և հետո
անճառապանություն և գործել. ուղարկել և մեզ Բուլ-
ղարիայից ընկ. Ս — Ն:

Այսպէս անա կես տարի յե անցել այն
վայրկենից, յերբ մի հատուկ սուրհանդակ ինձ
մի գաղտնի ծրար հանձնեց հետևյալ հրահանգով.

«Վոչ մի վաւարուշտ, վոչ մի հրացան չար-
ծակել. մահու պատժի դատաւճիռները պիտի ի
կատար ածվեն պաղ զենքով»:

Այն, անորինակ ազատությունների յերջա-
նիկ յերկիր, աստղադրոշ Ամերիկա: Այնտեղ
մահու պատժի համար գնդակներ ու պաղ զենք
չեն պետք, — այնտեղ ելեքտրական աթոռ կա:
Մնաղմուկ ու պարզ. ուղեղի ցնցում, վոսկրների
դող, վոյորապտույտ անկումն և... «դատաւճիռն
ի կատար ե ածված»:

Իսկ այստեղ դործն ավելի բարդ ե. պաղ
զենք, — յերկարատե ջղաձգություններ, տքաց,
խրխուոց, դուրս պրծած աչքեր... բը՛ռ-ու:

2.

Մենք ապստամբության շրջանումն ենք: Մեր
գրապանակներում հրահանգներ կան, վոր մտ-
տաւորապէս հետևյալն են ասում.

«Յեթե հանգամանքները պահանջեն, ջնջե՛ք
գյուղերի բ ո լ ո ՞ ը բնակչութիւնը»:

Յեվո—

«Գերի չառնել»...

Մեր շտաբը դպրոցն ե: Աշխարհագրական,
ազգագրական և ամեն տեսակ այլ քարտեզներ

ըով զարդարված սենյակում յես խմում եմ իմ
անմիջական մեծավորի, պատժիչ արշավախմբի
պետի հետ:

Իմ բաժակակիցը մի գեր, կարճահասակ
փոքրիկ մարդ է. նրա թխիկ այտերը մաքուր
ածիլած են. թեթև արծաթե փայլով սև բեխերը
ռազմականի վայել ձևով ցցված են դեպի վեր՝
սլաքների նման. աչքերը բորբոքված են հաճա-
խակի հարբեցությունից, բայց զխավորը, բը-
նորոշը, հիշողության մեջ մեխվողը նրա նեղ
հակատն է ու վրայի խոզանակը:

Գնդապետը փիլիսոփա է: Մի ծիծաղեք-
նրան ծանոթ է Շոպենհաուերը, կանտ է կաթ-
դացել մի ժամանակ, խոնարհվում է Նիցշեյի ա-
ռաջ, բայց յերկրային բանականության գերա-
զույն հայտնություն է համարում Հովհաննու
Հայտնությունը:

Յեվ թերևս այդ պատճառով նրա սիրած
տեսարանը մահու պատիժն է: Մանավանդ կա-
խաղան հանելը:

— Բավական է, վոր տեսնեմ կախաղան
հանելու անձին, ասում է նա, կուլ տալով հեր-
թական ըմպանակ կոնյակը, — յես կասեմ ձեզ,
թե ինչ տեսակ ջղաձգություններ կունենա նա
— ուղղակի, կողմնակի, հողալին, վոտը սեղմելով,
թե՛ կիսանվային, կողմերի փոփոխակի ջղա-

ձգութիւններով... Այ, որինակի համար, ձեր
 վզին նայելով՝ դուք կողմնակի յերկատատեմ
 ջղածութիւններ պիտի ունենաք, մի վտտի սեղ-
 մումով, իսկ յեա...

Խոսքը վերջացնելու ժամանակ շունւոյսով
 գնդապետը. սենյակը մտավ մի պառավ, մի տե-
 օակ կողքըհան, աչքը գեանին, մի կետի քցած:
 Կանգնեց սեղանի առաջ, ցնցվեց, սենյակը լըց-
 վեց պառավ կնոջ խեղդված, խուլ հեկեկանքով.
 Գլորվեց գետին և շնչասպառ լինելով սկսեց
 խնդրել գնդապետին, վոր իրեն տա յուր յեր-
 կու վարդոց, մի շաբաթ առաջ մահու պատժի
 լենթարկված պատանիների դիակները:

Հսել եք յերբ և իցե մի տանջանքից վտտ-
 քի հանած մարդու տնքոցը, վորի վրա նոր
 փորձ պիտի անեն, ավելի բարդ, անհամեմատ
 ավելի տանջալից քան այն, վորից հետո նա նոր
 ե ուշքի յեկել...

Ահավասիկ այն պառավի վողբի մեջ հենց
 այդ եր, վոր կար... Ողի անասելի կարիք զգա-
 ցի. դուրս յեկա դպրոցից:

3.

Վեց գյուղացի բերին: Յոթներորդը յերե-
 տասարդ կոմճունիստ Իլիեն ե: *)

*) Լեկներն ե, վոր բնկ Իլիեն հեղափոխական
 շարժման հարեւ ե հիշատակարանի հեղինակի ազգե-
 ցութիւնն առկ:

Յեա եւի, վոր սրան տարա այն ճանապարհովը, վորի վերջը պիտի լիներ—

«Մահու պատիժ պաղ գենքով»:

Նրանց բերին հարցաքննելու համար:

Սաոր, անտարբեր յեղանակով, անդորր գեմքով լեա դատ եմ անում, արագ և անաչառ:

Իմ խիղճն ու սիրտը վաղուց արդեն ծածկված են կոշտ ու կոպիտ կեղեվով, ուստի և ինձ չի վրդովում վորեւէ ապացույցների բացահայտութիւնը գյուղացիների դեմ: Ինձ համար միանգամայն պարզ է. ահա սա ձերբակալված և յուր վորդուն թաղելուց հետո վերադառնալիս, այս մեկը յուր փոքրիկ այգին գնալիս, իսկ ստիպտի սայլի վրայից... Այո, միանգամայն պարզ է ինձ համար, բայց... իմ թղթապանակում պետական իմաստութեան հրահանգներն են, ինձ ուղարկող իշխանութեան հրամանները...

Բայց ահավասիկ Իլիկը... Նա մ ե ծ բանի համար պիտի ապանվի: Նա ինձ շտեմնող ձեռքով: Նա կարողանում է յուր զգվանքը թաքցնել... և ահա յեա... Ախ, թույլ է մարդկային կամքը: Մի անտեսանելի, անողոր ձեռք յուր ծրարն և բաղ անում իմ առաջ, և յեա, ինքս ինձանից վախեցող վողորմելիս, գնում եմ գնդապետի մոտ:

— Անմեղ մարդիկ են, — ասում եմ նրան:

միանգամայն անմեղ: Պետք է սրանց ազատել:
 Զարմացավ գնդապետը, քսածիծաղ՝ ձեռքը
 տարավ դեպի սլաքաձեւ բեխերը և, մի փոքր
 մտածելուց հետո, մռայլ ասաց.

— Իսկ դուք ուղղակի՝ «133 հոգւվածի հի-
 ման վրա», վորպէս լրտեսներին...

Յեւ այս ասաց առարկություն չվերցնող
 յեղանակով...

Յեւ խոնարհ գլուխ տվի, դուրս յեկա...

4

Գողգոթան: Բայց վոչ թե առասպելական խա-
 չափայտեր, այլ աստղազարդ արծաթափայլ տե-
 դի վրա սեին տվող կախադաններ:

Մի փոքր հեռու—գերեզման է, խրամատի
 նման: Հրամայված է կախ չտալ նրանց, այլ
 պարզ՝

«Մահու պատիժ սլող զենքով»:

Ինչո՞ւ: «Պետական շահերի նկատառումներ»:

Յոթը դատապարտյալ կապված են միմյան-
 ցից—մի կենդանի պարիսպ, մարդկային մար-
 ծիններից հյուսված ցանկապատ....

Նրանց հետևում կանգնած են մեր զինվոր-
 ները: Ո՞վքեր են սրանք: Ի՞նչ են զգում այս
 վայրկենին: Ի՞նչպէս կարող էյին սպանել նրանց,
 վոր իրենց կյանքն են նվիրել իրենց յերկրի
 դյուշաօցիներին, բանվորներին, բատրակներին

Ի՞նչպե՞ս: Հենց այնպե՞ս.... Նրանք, զիտեն վոր ընդամենը յերեք շաբաթ առաջ յես մահու պատժի լենթարկեցի հինգ զինվորի, հինգ անբեխ տղայի, «ի՞նչ կարգադրությունները ճշտությամբ չկատարելու համար»: Հա՛—հա՛—հա՛... Խեղճ մարդիկ: Ի՞նչ յերկաթե մարդ եմ յես....

Այլ կողմից յերրորդը—իմ աշակերտ Իլինն է:

Ախ, յեթե յոթը—տասը տարի առաջ այս յեղելության նման մի վեպ կը արդայի... Ո՛ր, կը բորբոքվեյի զայրութից, բռունցքներս կըսեղմեյի, աչքերս գործոն վրեժխնդրության ծարավով կը վառվեյին...

Իսկ հիմա... Յես հանգիստ եմ,— խիղճս ու ամբողջ կոշտ ու կոպիտ կեղևով են ծածկված, ուստի և սառը, պաշտոնական հայտարարություն եմ անում.

—Ով վոր հիմա մի կարևոր բան մերկացնե, ներումն կ'ստանա:

Հուռ ե մարդկային մարմիններից հյուսված ցանկապատը:

Ուստի և յես հանում եմ թուղթն ու կատարում եմ վերջին պարտականությունս.

«Արքայական կառավարության հրամանով.

.....»

Նրանք նայում են դաշտերին, լճերին, գետին, աստղազարդ յերկնքին...

Նայում են և ապրում են այնպես, ինչպես
վոր չի կարող մարդ ապրել. իրենց եռության բոլոր
նյութաձևերով, բոլոր արենատար անոթներով,
բոլոր նյարդերով, կյանքի բոլոր անհուն սիրովը,
խակ նրանց ուղեղում — գիտեմ — բոցավառվում եր
այս հպարտ միտքը՝

— Մենք զոհեցինք մեզ, ով անուշաբույր,
աստղակապույտ, ցողազարդ կյանք, հանուն այն-
պիսի գաղափարների, վորոնցից բարձրը աշխարհը
չի իմացել, պատմությունը չի իմացել:

Գուցե խոսքերն ուրիշ են, բայց իմաստը,
իմաստը հենց այս է:

Իմ պաշտոնը վերջացած է: Հրաման...

Մեջքի, վզի մեջ մտնող թրխկացող հարված-
ներ. — կտրատվում են կրճիկները:

Վոսկրները վշրող թրերի խուլ զնդոցներ...

Հծծյուններ — վոր աշխարհը կը պատառեն
ծայրի ի ծայր:

Մեկը գերեզմանի մեջն ընկավ:

Մեկն էլ:

Մեկն էլ:

Դեռ կենդանի չեն. խոնավ սևահողի խա-
վարի մեջ գերեզմանի պատերին են զարնվում:

Վերջին լնկնողը իլիկն է:

Տնքոցներն ավելի կամաց են լսվում. մին-

չև անգամ տնքոցներ չեն, այլ մահամերձ խըր-
խոց:

Տասնյակ բահեր մխվում են բլրի մեջ և
գերեզմանի մեջ թափվող կոշտերի և իրար առ-
նող բահերի ձայների միջից լսվում է գերեզմանից
մահամերձ հեծեծող աղերսանք.

— Կա-ա-ցեք... յես... դեռ..., կենդանի
յեմ...

Այդ Իլիկն է:

Բայց կոշտերը թռչում են, բահերն ավելի
խորն են թաղվում հողաթմբի մեջ, հողի շերտը
խեղդում է կիսամեռների տնքոցները...

5.

Անքուն, տառապալից են դարձել իմ գի-
շերները: Ի գուր վեր եմ կենում անկողնիցս,
ճրագ եմ անում, բաց եմ անում ծանոթ գրքե-
րըս. մի անծանոթ, անողորձ ձեռք բաց է անում
իմ կյանքի պատմությունը, իսկ այնտեղից...

* *
*

Բարի և չար մարդիկ..., վայր եմ դնում
գրիչս, վորպեսզի ատրճանակ վերցնեմ, բերանս
դնեմ և...



ՉԵՌՆԱՇՂԹԱՆԵՐԸ

1.

— Դատարանը գալիս ե...

Սպիտակ, վարդագույն, յեսամանի գլխարկ-
ներից, գանգրահեր, խոպուպավոր ու ճաղատ
գլուխներից, — Վարշավայի «դըմի-մոնդի» և
«դեմոկրատական» բարձր դասակարգերի լսարա-
նից դեպի ալեգարդ դերասանները, վոր հանդես
են գալիս անաչառ դատավորների դերերում,
ձգվում են ամենասրտագին, գրեթե շոշափելի
համերաշխության թելեր:

Տրագիկոմեդիան սկսվում է ամբաստանա-
գրով: Նրա սկզբնավորությունը կազմված է
կես-հեգնական վոգով:

Ահավասիկ, ասում է, այսինչ ու այսինչ
տղերքը, հավատալով փասաբեր կոմիստերնի
խոսքին, թե՛ հենց իրենք, այս տղերքն են այն
սոցիալական տարրերը, վորոնց ուսերի վրա յե
դրել պատմությունը՝ կոմմունիստական սկզբունք-
ներով աշխարհ վերաշինելու և այդպիսով ժա-
մանակակից քաղաքական, տնտեսական և բարո-
յական հիմունքները խորտակելու հոգսը, վճռել
են ամենակարճ ժամանակում հեղափոխություն
առաջ բերել...

Յերբ նախագահը, հաղիվհազ ժպտալով, ամ-
բաստնագրավ թերթերը վայր է դնում սեղանի

վրա, ձեռք մեկնում ե ջրի շնի, դանդաղ լըցնում ե բաժակն ու խմում, — հանդիսականները կատակաբանություն են անում, հեգնում են, — մի խոսքով ընդհանուրի տրամադրությունը բարեսիրտ, գրեթե ֆարսի տրամադրություն ե:

Բայց այդ ամբաստանագրի միայն սկզբնավորությունն ե.

. . . Այնուամենայնիվ, կոմյերիտական կատակները, — պարզաբանում ե այնուհետև ամբաստանագիրը, — չսոված վտանգավոր հետեւյալներ կարող են ունենալ. կոմյերիտականների շուրջը խմբվում են անգիտակից յերիտասարդության մասսաներ, գործարաններում կազմակերպվում են կոմմունիստական խմբակցություններ, ուստի... այսինչ ու այսինչ հողավածները...

Սանութպանների ու պրոֆեսորների, պոետիկների ու հասարակական գործիչների դեմքերի վրա չար ծամածռություններ են յերևում: Նրանց աչքերում վառվում են բացահայտ ատելության կրակներ:

Դահլիճում մեռելային լռություն ե տիրում դատարանը հարցաքննում ե ամբաստանյալներին:

— Ձեր տարի՞քը:

— 18:

—20:

—19:

—Պատկանում եք վորևե կուսակցության:

—Այո, կոմսունիստական:

—Ձեր դավանությունը:

—Կոմունիզմ, — պատասխանում են վոմանք:

—Հեղափոխություն, — պատասխանում են մյուսները:

—Պրոլետարիատի դիկտատուրան: — Այդ Հակոբ ծիտտերշպիլներն ե:

—Մեղավոր համարում եք ձեզ:

—Հեղափոխական մասսաների — յերկրի բանվորների ու գյուղացիների առաջ մեղավոր եմ համարում ինձ, վոր հեղափոխության գործը մինչև վերջը չհասցրի, բայց համոզված եմ, վոր ուրիշները կավարտեն այդ գործը:

— Ձեր կազմակերպության ծրագիրը:

—Այն դասակարգերի կործանումն ու ճշնշումը, վորոնց շահերի արտահայտիչն ե հանդիսանում այս դատարանը:

Յեվ այսպես՝ կատակերգությունը գլուխ չեկավ:

2.

Նախագահի ձայնը հնչում ե վստահ ե փոքր ինչ թատերական յեղանակով. պարզ ե, վոր նա գոհունակություն ե զգում:

. . . «Աղամ Գրինբերգ, — բերդարգելու-
թյուն 2 տարով, Միխալինա Շաֆլիկովսկա և
Հուդիթ Աբրամովսկա — բերդարգելություն 1 տ.
6 ամիս:

— Յեվա Շպեյզման, Պ. Գելֆգոտ, Լիզա
Կովենսկա և Հանա Ռոզեն — բերդարգելություն
3 տարով:

— Իզնատիոս Բիրենցվեյզ, Լեոն Սուրովեյչիկ,
Ալեքսանդր Սվիոնտովսկի, Չեսլավ Ուսենկովսկի,
Ադոլֆ Ռոզենբերգ, Շիֆրա Գուդվասսեր, Լյու-
բա Կովենսկա և Մարկուս Սամուել — ծանր բան-
տարկություն 3 տարով:

Եդուարդ Ուզդանսկի — ծանր բանտարկու-
թյուն 3 տ. 6 ամիս ժամանակով:

Բրոնիսլավ Բերման և Արոն Չակհեյն —
ծանր բանտարկություն 4 տարով:

Ֆերդինանդ Ֆլիդերբաում (Բողդան Չար-
սկի) և Գդալյա Չալցբերգ — ծանր բանտարկու-
թյուն 5 տարով:

Հակոբ Յիտսերշպիլներ — ծանր բանտար-
կություն 6 տարով:

Նախագահը փակում է սև թղթապանակը, —
դատարանը հեռանում է կանխարգել միջոցը վո-
րոշելու համար:

Դատապարտյալներն առույգ են: Միայն
Լյուբա Կովենսկան է մահու չափ գունատ. նա
միայն յերեկ է անկողնից վեր կացել. հիվան-
դոտ-նրբակազմ, աչքերը լայն բաց արած, նա

յում ե պատուհանին: Իսկ այնտեղ, պատուհանից դուրս, գարնանային յերեկոն ե վառվում. նոր հալած, արեգակնափայլ կապույտով սքողված տարածություններից փողոցների, սալահատակների վրա ծփում ե մայրամուտի կապույտ-արփենի ովկիանոսը:

3.

Յեվ հանկարծ, մայրերի կամացուկ, խեղդված հեկեկանքի միջից, ինչպես գարնանային ցնծագին ալիք, ինչպես փշրված շղթաների անկումն՝ խուժում, լցնում են դահլիճը, սիրտ բորբոքելով աճում են մարտական յերգի խոսքերը...

Հարյուրավոր անգամ լսել եմ այս հիմնի խոսքերը գաղտնի ժողովներում, խուլ նկուղներում, քաղաքից ու գյուղերից հեռու պուրակներում: Հարյուրավոր անգամ անասելի կերպով թրթռացել ե սիրտս և բառիկադների կռվի փափագով տոչորվել ե հոգիս, բայց այս անգամ յես այն զգացի, ինչ վոր չի կրկնվի և չի պատմվի:

Այո, վոր յես... Դատավորների, խանութպանների, պրոֆեսորների, հասարակական գործիչների գեմքերը մի 2 ըոպե, գուցե ավելի, մի խորունկ, հիվանդագին շփոթություն, ապշու-

թյուն, մի տւաակղրն յերկյոա բորիտահայտեցին:

Թվում եր, թե ինտերնացիոնալի խոսքերը բոցավառեցին դահլիճը, և հզորի մեկը, հաղթական՝ ինչպես պատմության ընթացքը, մոտիկ՝ ինչպես վաղվան առավոտը, կարդում է յուր հրեղեն դատավճիռը, վոչ կոմմունիստների, — դատարանի, հանդիսականների, տիրող դասակարգերի վերաբերմամբ:

«Մենք շղթայում ենք մեր ձեռքերը, վորպեսզի հալեցնենք այդ շղթաները համաշխարհային ազատության վառվող բոցի մեջ»: Ահա թե ինչ եյին ասում այն խոսքերը, ահա թե ինչի մասին եյին հնչում բանտի կամարների տակ գնացող պատանիների ու աղջիկների բոցավառ սրտերը:

ՄԵՐ ԱՄԵՆՈՐՅԱՆ

(Լեհացի ընկերների մի նամակից)

Վարչավայի բանտում մենք 38 հոգի յենք, իսկ ամբողջ Լեհաստանի բանտերում՝ 300-ից ավելի:

Մեր որերն անցնում են տրտում, տանջելու չափ միորինակ — փոփոխություն են բերում քննիչների ու բանտապահների հարցաքննություններն ու ծանակելը:

Մեր սենյակներն հաճախ քրեյական հանցագործներ են ներս բերում: Մեր բողոքներին պատասխանում են.

— Իսկ դուք իսկապես ինչո՞վ եք նրանցից լավ:

Բացառիկ պահքով ենք ապրում — մի կտոր հաց, տաք ջուր և յերկու-յերեք ուրը մի անգամ լոբի:

Բայց ընտելանում ենք և հարցաքննություններին, և քրեյական հանցավորների սրիկայություններին, և պահքին: Ավելի դժվար տանելի չե գրքերի, լրագրների, մարքսիստական գրականության բացակայությունը:

Մեր դիմումներին վարչությունը պատասխանում է.

— Ոգտվեցե՞ք բանտի գրադարանից . . .

Գրադարան ասելով հասկացվում է կաթոլիկական «գրականություն» պարունակող մի փոքրիկ սլահարան: Այդ «գրականության» մեջ սակայն կարելի չե գտնել—

«Ժողովածու թվաբանական խնդիրների»,

«Խոտ ցանելու մասին»,

«Հրթիռներ պատրաստելու հեշտ յեղանակ» և այլն:

Տրտում, անտանելի միորինակ են անցնում մեր օրերը: Մեր մռայլ, տխուր կյանքը

մի քանի որով ցնցեցին մայիսի մեկի անյգերը:
Մեր սենյակը վարչութիւնը բաց յերեք՝ գի-
տակցութիւնը կորցնելու չափ ծեծված, անխնա
արյունլիկ արած ընկեր ...

Հիմա նրանցից իմանում ենք, թե ինչ է
լինում յերկրումը, Յեվրոպայում, Խորհրդային
Ռուսաստանում:

ՎԵՐՋԻՆ ԺՊԻՏ

Համբուրգի ապստամբութեան ժամանակ սպան-
ված գերմանացի կոմյերիտական Հանս Մենդելի հի-
շատակին

Ով ասաց, թե
Լիբկնեխտը միակ է,
Քանի վոր միլիոնավոր
Լիբկնեխտներ կան:
Ալ. Ժարով.

Նախորդ որը մի փոքրիկ սենյակում մենք
բրոնզի գույնով գրում էինք կարմիր տեղի
վրա.

«Լիբկնեխտն ընկավ, վոտքի յե յելնում ան-
խորտակելի հսկա կոմունիզմը»:

Այդ որը Հանսը Համբուրգի յերիտասար-
դութեան վեց ժողով այցելեց: Մտազանում էր
դավաճաններին: Խոսում էր Ռուսաստանի պրո-
լետարիատի անսահման տառապանքների մասին:

Հարյուրավոր պատանիների և աղջիկների սրտեր վառեց հանգուցյալի ավանդների կրակով: Հարյուրավոր յերիտասարդ կրծքերից յերդուժ դուրս կորզեց մինչև վերջը հավատարիմ մնալու այդ ավանդներին:

Գիշերը ճառ եր պատրաստում: Ուրախ ու պայծառ ժպիտով ասում եր.

—Ախ, յերանի թե մարդ կարողանա կոմ-մունիզմի ժորեսը դառնալ: Ազիտատորը, քարոզիչը յուր խոսքովը քարեր պիտի հալեցնեն...

Այդ «քարեր պիտի հալեցնեն»-ն—մինչև այսոր հնչում ե ականջիս...

Առավոտը Հանսը փաթաթեց բրոնզի փայլով բոցավառվող դրոշը, վերցրեց սեղանի վրայից բլոկ-նոտի թերթերը՝ վրաները թեզեր գրած, և յերբ առաջարկեցին նախաճաշ անել, ասած.

—Ժամանակ չկա...

Յե՛վ գնաց: Բանվորական թաղերը: Յուրայինների մոտ:

Մի ժամից հետո գնում եր Համբուրգի փողոցներով: Դրոշն եր տանում: Մեծատունների ապարանքների, ոտելների, բանկերի և խանութների առաջովը: Առաջնորդում եր կապույտ բլուզավոր, յերիտասարդ, հրաշյա գվարդիային:

Իսկ մի ժամ ևս հետո պառկած եր սալա-

հասակի քարերի վրա: Արյան քարակ թելերը
 ձգված եյին քարերի վրա: Հետ քցած և արդեն
 սառած ձեռքով. սեղմել եր վայր ընկած, վոտի
 տակ տված դրոշի կոթը: Յեվ հազիվ-հազ ժըպ-
 տում եր:

Ո՛ւմ:

Գուցե պատմությանը, նրա կառքի յերկա-
 թե անողոք ընթացքին: Յեվ ժպտալով վերջին,
 ընդմիջտ սառած ժպիտով՝ ասում եր մեր ցնծա-
 ցող կառքին.

— Յես, ի հարկե, գիտեմ, ճշմարիտ վոր գի-
 տեմ. կապույտ բլուզավոր, յերիտասարդ, այսոր
 պարտված գվարդիաները կը հաղթեն, անպատ-
 ճառ կը հաղթեն վաղը:

ՅԵՐԲ ԴՈՒՔ ԽՈՐՏԱԿՎԵՔ

(Ըսկ. Ռ.-ի, այն 110 կոմյերիտականներից մեկի
 ճառից վորոնց Պուանկարեյի կառավարությունը քցել
 և Ռուրի նահանգի բանտերը):

... «Յեվ արդ, յես և իմ կոմսունիստ ըն-
 կերները, նրանք, վոր նստած են՝ այսոր այս վան-
 դակի յետևը, նրանք, վոր նստած են յեղել և հիմա
 փակված են բանտերում և նրանք, վոր պ ի տ ի
 ն ս տ ե ն այստեղ, — մենք բոլորս ամբաստան-
 նվում ենք, վոր բանավոր ազիտացիայի, թուլցիկ-
 ների և այլ միջոցներով փորձ ենք արել Գեր-

մանիայի այժմյան կառավարութեան «դիրեկտիվներն իրագործելու» և դրանով արգելք լինելու Ֆրանսիայի կառավարութեանը՝ պարտաված յերկրից առնել այն, ինչ վորնվածված է Ֆրանսիական, բելգիական և այլ ժողովրդների արյունով:

Այդ բոլոր մեղադրանքները մենք մերժում ենք և պատրաստ ենք յերդվելու կոմպունիստների ազնիվ խոսքով, վոր այդ մեղադրանքները միանգամայն անհիմն են:

Գերմանիայի իմպերիալիզմը, բուրժուազիան կապիտալիստական հասարակարգը նույնքան ատելի յեն մեզ համար, վորքան Ֆրանսիայի, Բելգիայի և բոլոր այլ յերկրների իմպերիալիզմը, բուրժուազիան, կապիտալիստական հասարակարգը:

Մենք կարծում ենք, վոր այս սպանդի հեղինակները, վոր շատ միլիոնավոր բանվորների ծաղիկ կյանքեր խլեց, ամբողջ նահանգներ խուսանացրեց, ահագին հարստություններ վոչնչացրեց, վոր ստեղծված էյին ճնշված մասսաների աշխատանքով,—այս սպանդի հեղինակները բոլոր պատերազմող յերկրների բուրժուազասակարգերն են, և մենք համոզված ենք, վոր թե այս և թե միլիոնավոր այլ վոճրագործությունների համար—մասսաների հարստահարութեան,

նրանց աղքատանալու, մահանալու, աճող պոռ-
նկության, համաճարակների և այլն—բոլոր յեր-
կրների բուրժուա դասակարգերը պիտի
պատժվեն և նույալիսի դաժան պատիժ կը կրեն,
ինչպես վոր պատժվեց Ռուսաստանի բուրժուա-
զիան:

Մենք մաքառում եյինք ձեր բռնություն-
ների դեմ, խոսքով ու գործով բողոքում եյինք
ձեր վոճրագործությունների դեմ վոչ թե այն
պատճառով, վոր մենք գերմանացի յենք, իսկ
դուք՝ ֆրանսիացի, այլ այն պատճառով, վոր
մենք աշխատանքի զավակներ ենք, իսկ դուք՝
գիշատիչ հափշտակող դասակարգի, բուրժուա-
զիայի ներկայացուցիչները:

Այն նոր անցած ամիսներին, լերբ Ռուրը
պատկանում եր մեր բուրժուազիային, մենք
մաքառում եյինք նրա դեմ, ատում եյինք նրան
նույնպես, ինչպես մաքառում ու ատում ենք
ձեզ:

Իմ և իմ ընկերների կողմից միայն մի
խնդիր եմ ուղղում ձեզ:

Թողեք այդ կոմեդիանտությունը, վոր դա-
տաստան եք բեմադրում, դատավորների դեր
կատարելով: Յեթե այդ անհրաժեշտ ե, գնացե՛ք
խորհրդակցության սենյակը, կեղծավորության
համար քննեցե՛ք խնդիրը և հանգիստ տվե՛ք վեր-

ջապես պահակներին: Նրանք տանջվեցին պաշտպանելով ձեր շահերը, վոր ոտար են նրանց համար:

Մենք գիտենք. դասակարգը դասակարգի դեմ է: Ճնշողները չեն խնայում ճնշվածներին: Կորչի կոմեդիան:

Համարձակվում եմ պնդելու.

Յերբ վոր դուք խորտակվեք և պրուեստարիատը զայրագին յուր հաշիվները ներկայացնե՞ձեզ, նա բեմադրություններ չի սարքի: Նա յերկու ըոպեյի ընթացքում կանե այն, ինչի վոր դուք արժանի չեք»:

ԲԱՌԻԿԱԴՆԵՐԻ ՎՐԱ

(Մի եջ Համբուրգի ապստամբության պատմություններից *)

23-ին, առավոտյանը վաղ, կոմսոնարների մարտական խմբերը գրավում են վոստիկանատները, զինաթափ են անում վոստիկաններին, ձեռք են բցում վոստիկանական զինարանների մի մասը:

Վոստիկանական վարչությունը շտապում է հավաքել դեռ զինաթափ չարած և քաղաքից դուրս փախած վոստիկաններին և մարտական միավորներ կազմել: Վոստիկանությանը միանում

*) 1923 թ. հոկտեմբերին:

են յուսկերներ, նախկին սպաներ, բուրժուաներ, արժութավաճառներ, խանութպաններ... Վոստիկանության շտաբը հաջողում է ժողովել մոտ յերեք հազար զինյալ մարտիկ: Վոստիկանական զորախմբերին հրաման է տրվում անհապաղ գրավել բանվորական թաղերը:

Բայց այդ թաղերն արդեն պատրաստված էին կռվի համար: Հարյուրավոր այր և կին բանվոր մի քանի ժամվա ընթացքում փողոցները ծածկել էին բառիկադների ցանցով: Բարմբեկը ապստամբության միջնաբերդն է. նրա բառիկադներն անառիկ են, սայահատակները քարուքանդ են արված, պատանիներն ու աղջիկները փողոցներն ակոսել են խրամատներով:

Ցերեկվա ժամը չորսից սկսվում են կատաղի կռիվներ: Սպիտակ զորամասերն առաջ են գնում վաշտ-վաշտ և գումարտակ-գումարտակ: Նրանց տրամադրության տակ տասնյակ գնդացիներ կան: Ապստամբների ձեռքին ընդամենը յերեք հարյուր հրացան կա:

Բայց հեղափոխական վոզևորությունը ըզգացվում է ողի մեջ: Գրոհ-գրոհի հետևից յետ է մղվում: Պատանիներ, փոքր տղայք, աղջիկներ ձգտում են դեպի առաջապահ բառիկադները: Հարձակվողները զգալի կորուստներ ունեն: Ցերեկոյան դեմ նրանց ոգնության են հասնում

ուժեղ ոժանդակ խմբեր կյուբեկից և ռայխսավերի
զորամասեր շրջակայքից: Հարձակումները նո-
րոգվում են, բայց արդյունքն առաջվանն է.
ապստամբներն ընկնում են, բայց անձնատուր
չեն լինում: Վոգևորությունն աճում է:
«Ձեռնակոխի» — պահանջներն ավելի ու ավելի
բարձր ու համառ են հնչում:

Բայց արդեն գիշեր է. ռայխսավերը, յուն-
կերները, վոստիկանությունը նահանջում են
Համբուրգի կենտրոնները:

Հուլիսի 24-ին, կռիվը վերսկըս-
վում է: Հարձակվողներին միանում են կիլից
շտապով կանչված նավագների ընտիր խմբեր:
Հարձակումները հետևում են մեկը մյուսին:
Գնդացիների տարափը տեղում է հպարտ
բարձրացած բառիկադներին վրա:

Բայց նորից գիշեր է... Յեվ վոչ մի բառի-
կադ դեռ չի տրված հարձակվող, բազմաթիվ,
քաջ զինված թշնամուն:

Հաջորդ յերկու ուրը դրությունը մնում է
անփոփոխ, բայց ույժերի և տեխնիկական մի-
ջոցների հարաբերությունը խիստ զգալի կեր-
պով փոխվում է հոգուտ հարձակվողների. ապ-
ստամբների փամփուշտներն ու հրացանները
վերջանում են, — նրանք դիմանում են շնորհիվ
հեղափոխական վոգևորության, թշնամուն հաղ-

Թելու ցանկության, ամբողջ Գերմանիայի պրո-
լետարիատի վաղվան ապստամբության վրա ու-
նեցած ջերմ հավատի:

Բանվորական թաղերի աղջիկներն աղա-
խինների հագուստներով, վտանգելով իրենց
կյանքը, անցնում են Համբուրգի կենտրոնները,
լուրեր են փորսում, բայց ավանդ...—Գերմանա-
կան Հոկտեմբերի, բառիկադների կռվի ու հաղ-
թությունների մասին Սաքսոնիայից ու Պրուս-
սիայից լուրեր չկան:

Գերմանիայում անդորրություն է տիրում:

Հոկտեմբերի 26-ն է: Հակառակորդի ու-
ժերը հասնում են 5—7 հազարի: Գնդացի-
րների կրակն անընդհատ ուժեղանում է: Բեր-
վում են ուժածիգներ: Հարձակումներն ավելի
ու ավելի կատաղի և վճռական են դառնում:

Պարտությունն անխուսափելի չէ:

Հառաջ է գալիս դիրքեր հանձնելու, ա-
ռաջնորդներին փրկելու, զենք թաքցնելու դա-
ժան անհրաժեշտությունը...

ՎԵՐՋԻՆ ՎՈՂՋՈՒՅՆ

«Թող կորչի մարդու ճնշումը մարդու
ձեռքով»:

Այս մեծ գաղափարի իրագործման կամքն
եր նրանց կյանքի միակ ղեկավարը:

Յեվ այս պատճառով նրանց այսոր տա-
նուժ են դեպի մահու պատիժ:

Նրանք արդեն ուրվականներ են, վորով-
հետև անցել են գերմարդկային տառապանք-
ների և տանջանքների յերկար կատակոմքները:

Մերկացրեք նրանց, լույս արեք—և դուք
կտեսնեք շիկացրած յերկաթալարի հետքեր,
չորացած վերքեր, ժանգոտ ունելիքի բռնած տե-
ղեր, տարորինակ կապուտածներ մեջքերի վրա,
կոնատակներին...

Սակայն այդ բոլորն արդեն անցած բան է:
Կատակոմքներն անցել են պատվով: Վոչ
մի դահիճ չի կարող ստել, թե կոմմունարները
դավաճանել են:

Մի բան միայն անհրաժեշտ է պատմել ան-
ցյալի մասին:

Նրանց «դատել են»:

Դատարանի նախագահը մահու պատժի մա-
սին հայտնելուց հետո՝ անփուլթ կերպով ասաց.
— Ձեզ իրավունք է վերապահվում ներումն
խնդրելու:

Բայց այստեղ... ողի մեջ յելեքտրական ա-
լիքներ անցան. դատարան մտավ պատմության
ճշմարտությունը, դատապարտյալների բերանը
հրեղեն խոսքեր դրեց, — այդ խոսքերը թռչում

են չաբաստանջ յերկրի մի ծայրից մյուսը կար-
միր կտափների ձեվով:

Այդ խոսքերն արտասանեց հունգարական
կոմյերիտմիության անդամ ընկեր Կորվինը:

—Մի ստեք այդպես անշնորհք. մենք գի-
տենք—դասակարգը դասակարգի դեմ է: Վո-
մանք ճնշման կողմնակիցներ են, վոմանք ել՝կոմ-
մունիզմի հաղթության: Դուք չ ե ք կ ա ռ ո ղ
ճեզ չսպանել: Բայց ավանդ: Դուք կարող եք սպա-
նել միայն մեր մարմինը, բայց գաղափար-
ները... ճնշվածների ամբողջ աշխարհն են հա-
մակում՝ ձ ե գ սպանելու համար, հանուն նը-
րանց ազատագրության:

Պատմությունը արամաբանական է, և դուք
չեք, վոր պիտի փոխեք նրա յերկաթե որենք-
ները: Թողնե՛ք սուտը... Մենք ուրախությամբ
ենք նայում մահու աչքերին. նրանք ամբողջ
աշխարհի ստրկացյալների մոտալուտ հաղթա-
նակն են ավետում...

Յես շեղվեցի: Չե՛ վոր նրանց դեպի մահու
պատիժ են տանում...

Գիշերն անցավ: Հրեղեն գեորգինը բացվում
է արևելքում, —նրա հսկայական թերթիկներն
ընդգրկել ու վառել են յերկնքի կեսը...

Յեվ թվում է, թե տանջանքների կատա-
կոմբներից, բանտի ճնշող կամարների տակից

նրանք գնում են բոցավառվող արեվելքի այգա-
ծին ծածկույթի տակ

* *
*

Կախաղաններ:

Դասակարգի նվիրաբերված կյանքի վեր-
ջին կայանը: Յեվ վերջին անարգանքը մի
սուրբ յեզուիտ փորձում է «խաչափայտի» ա-
ռաջ «զղջումն» կորզել այն մարդկանցից, վոր
յեկել են իրենց սրտի վերջին թրթիռը նվիրե-
լու յերկրի ճնշվածների ու ստրկացյալների դա-
տին:

Յեզուիտին պատասխանեց ալեվոր Լասլոն.
— Ստրուկ հանուն Քրիստոսի, դու դահիճներին
ես պետք, և վոչ թե մեզ...

Ծունկ չոքեց, նայեց հրեղեն գեորգինի
թերթիկներին և կամաց, կարծես ինքն իրեն,
ասաց.

Յերկրի բանվորներին, գյուղացիներին-վեր-
ջին վողջույնս... Տանջված, արյունաներկ յեր-
կրին—վերջին համբույրս»:

Յեվ համբուրեց հողը:

Համբուրեցին նաև մյուս ութ հոգին...

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՀՐԴԵՅԻ ՄԻ ԿԱՅԾ

Սոցիալ-դեմոկրատական մամուլը:

Առաջին, յերկրորդ, յերրորդ յերեսներում

կորպուսով տպագրված են—վիճաբանություններ ազատ պարլամենտարիզմի և ժամանակակից ֆաշիստական իրավակարգի մասին, ֆաշիստական սխառեմի մեջ մտցնելիք ուղղումների, այն մոմենտների մասին, վորոնցով կարող եր պայմանավորվել սոցիալ-դեմոկրատիայի աշխատակցությունը Մուսսոլինիի կուսակցության հետ...

Զորրորդ յերեսում պետիտով.

ՊԱՐՄԱ.

«Դիմադրության փորձի ժամանակ սպանված ե բանվոր-մեխանիկ Պուցարինի Ալբերտոն, 21 տար.» :

ՀՌՈՄ

«Բանվոր յերիտասարդության ցույցի ժամանակ կառավարական զորքերը վիրավորեցին ցուցարարներին 20 հոգու.» :

3 հուլիսի. ԲԵՐԳԱՄՈ.

«Մի բանի դիմակավորված ֆաշիստ ներս խուժեցին բանվոր Զուզեպպե Ռուդոլֆի բնակարանը և մի շարք բռնություններ գործեցին նրա ընտանիքի վրա» :

«Մրանից հետո ֆաշիստները սկսեցին հրացան արձակել տան վրա: Ռուդոլֆի յերիտասարդ դուստրը հորը պաշտպանելիս ծանր վիրավորված ե» :

ՀՌՈՄ.

«Յերեկ վոստիկանությունը ձերբակալեց յերկու աղջկա և ուղարկեց քննիչի մոտ: Նրանք մեղադրվում են, վոր կարմիր թաշկինակներ են գործածում իբրև ցույց»:

9 հուլիսի. ՀՌՈՄ.

«Ձերբակալված են բանվոր յերիտասարդներից 17 հոգի:

Խուղարկության ժամանակ գտնված են մեղսադիր փաստաթղթեր, — այն է՝ պատկերներ, վոր ներկայացնում են Լենինին, յերկրագնդի վրա կանգնած, «լուսավորության բուշեիկական մինիստր» Լուսաշարսկուն, Լենինի բրոշյուրը՝ «Պետությունը և հեղափոխությունը» և այլն:

10 հուլիսի. ՀՌՈՄ.

«Ռիսորջիմենտո հրապարակում ծանր ծեծի յենթարկվեց մի յերիտասարդ բանվոր զգեստի վրա մեխակ ունենալու համար:

Միլլիցիայի տեղեկությունների համաձայն մեխակ կրելը կոմմունիստական Միության անդամների համար մի նշան է պարկերում ու հրապարակներում գաղտնաբար ժողովվելու»:

ՍՊԵՑԻԱ. «Հուլիսի տասին ձիթահանքի սահմանակից մի այգում գտնված է յերեք գյուղացի տղայի դիակ»:

Նրանցից մեկի կրծքի վրա գտնված է հետևյալ գրությունը.

«Այսպես կը վարվենք բոլոր հակաֆաշիստներին հետ»:

ՎԻՄԵՐԿԱՆՏԵ. Ամբոխը սպանեց յերկու կոմյերիտականի: Նրանց զրպաններում գտնված են «Avanti» թերթեր:

3 հուլիսի. ԱՐԵՅՑՈՒ.

Վերջացավ 56 բանվորների դատը: Նրանց թվում շատ յերիտասարդներ կան:

Բիանկի Ոսվալդոն և Բինդի Ջիովանին դատապարտված են բանտարկության 30 տարով, Ֆուգինին—22 տարով, Չասսի Ատտիլիոն—18 տարով և Ջեսսինի Ջիովանի—14 տարով:

15 հուլիսի. ՄՈԼԻՆՎԵԼԼԱ.

Ֆաշիստները սպանեցին յերիտասարդ 17 տարեկան բանվոր Նաննի-Պիեռո Ֆորտունատոյին:

Այս վոչ թե մի տարվա, վոչ թե մի ամսվա տեղեկությունների ամփոփումն է, այլ միայն 1923 թվի հուլիսի 2-ից մինչև 15-ը:

Յեվ քաղված է վոչ թե ֆաշիստական կառավարության տրամադրության տակ յեղած նյութերից, վոչ թե մեր հռովմայեցի ու գաղափարացի ընկերների սգավոր արձանագրություն-

ներից, այլ լաքեյություն անող ստորաքարշ
սոցիալ-դեմոկրատական մամուլից:

Յեզրակացությունները պարզ են:

ՅԵՐԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ընկեր Ռ. յերրորդ որն է չի վեր կենում
տախտի վրայից:

Մինչ այս՝ գիշերները նա այս կողմն այն
կողմն եր ընկում բանտի սենյակում, բարձրա-
նում եր փոքրիկ պատուհանի մոտ, ամբողջ ժա-
մեր մնում եր կանգնած, հետո ընկնում եր քա-
րե հատակի վրա, սաստիկ ծանր տնքում եր:

Յերեկ չե՝ մեկել որը Ռ. պառկեց:

Մենք միաձայն պահանջեցինք, վոր մեր
հիվանդ ընկերին բանտի հիվանդանոցը փոխա-
դրեն:

Վերակացուն լսեց մեր պահանջը, ձեռք
տվեց բեխերին, ասաց.

— Այդ գուցե անսովոր լինելուցն է:
Պետք է սպասել:

Յեվ գնաց:

Մենք անհապաղ հացադուլ հայտարարեցինք:

Պատերին թրխկացնելով տեղեկություն
տվինք մեր վորոշման մասին դրացի սենյակ
ները:

Մեզ պատասխանեցին.

— Համերաշխ ենք ձեզ հետ. մենք ել ենք հացադուլ հայտարարում ...

Յերկրորդ որը մեր սենյակը բերին սպիտակ հաց և ... մսաջուր, վոր առաջին անգամն եր վեց ամսվա ընթացքում. ցորենի հացով և մսով ապուրով վարչությունը փորձում եր մեր հացադուլի առաջն առնել:

Հացն ել, ապուրն ել թողինք առանց ձեռք տալու:

Այսոր, մեր հացադուլի և ընկ. Ռ.-ի ծանր հիվանդության յերրորդ որը, մեր սենյակն յեկավ բժիշկը, մի փոքրիկ մարդ վոսկե պենսնեյով, հաստ փորով և զզվանքի շարժումներով...

Նա մոտեցավ հիվանդին.

— Խնչդ ե ցավում:

Ընկ. Ռ. դժվարությամբ խոսքերն արտասանելով պատասխանում ե.

— Գլուխս: Շատ ե ցավում ... սիրտս ... և առհասարակ ամբողջ մարմինս ...

Հետո ավելացնում ե.

— Թե մեռնելու յեմ ... գոնե շուտ լինի:

Թխթխկացնելով հիվանդի կուրծքը և զըզվանքով կնճռելով դեմքը, բժիշկը հարևանցի տառում ե.

— Այո՛: Այդ լավ կը լիներ հասարակութ-
յան համար ել, ձեզ համար ել:

Մի բոսկե ևս, — և բժիշկը յեզրափակում ե.

— Յես ձեզ համար դեղ կ'ուղարկեմ:

— Բայց ոգ չկա, — թույլ բողոքում ե ընկ-
Ռ.ն... Գլուխս սաստիկ ցավում ե...:

— Վո՛չ: Ողբ միանգամայն բավական ե ...
Յերկախոսությունը վերջացավ: Բժիշկը գնաց:
Մենք շարունակում ենք հաղադուլը: Յեվ հինգե-
րորդ ողբ միայն ընկ. Ռ.ն-ին տանում են բանտի
հիվանդանոցը:

Ուշ չե՞ արդյոք:

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ

Այնտեղ, ուր տիրապետող դասակարգերի
կամքով միլիոնավոր մարդկային կյանքեր վռչըն-
չացան, վորտեղից իրենց ընտանիքների մոտ են
վերադարձել միլիոնավոր խեղանդամներ և ան-
դարմանելի հիվանդներ, այնտեղ վորպես ան-
մտության և գազանային անգթության հիշա-
տակարաններ՝ ցրված են ավերակներ, յեղբայ-
րական գերեզմաններ և մոռացված խրամատներ,
իսկ նրանց վրա անտեսանելի սավառնում ե
պատերազմի մեջ ծնված և վերսայլի առանձնա-
սենյակներում զորացած ա տ ե լ ու թ յ ու լ ն ը:

«Սափառնում ե անտեսանելի»: Այս շատ
եւ ճիշտ է.

Ռուրի նահանգում այդ ատելությունը տե-
սանելի չեւ և շոշափելի:

«Ազգերի» հակամարտությունը, ազգային
և միջազգային խմբերի մահացում, կատաղի
պայքարն այստեղ հասցրած են լարման գա-
գաթնակետին, այնպիսի ձևերի, վոր կրկին ու
կրկին անգամ վկայում են անսանձ, կուրացնող
ընչասիրությամբ և միայն նրանով համակված
բուրժուազիայի այլասերման մասին:

Բայց ավերակների և խրամատների հակա-
յական գծի վրայով, արյամբ գծված և ատելու-
թյամբ լցված սահմանի վրայով ձգվում են
ավելի ու ավելի ամրանալով և անքակտելի դառ-
նալով, ստրկացյալների դասակարգային համե-
րաշխության թելերը, վոր զոդում են ու պիտի
զոդեն և մի բանակ դարձնեն պրոլետարներին,
վոր հեծում են արյան ու ատելության սահմա-
նի յերկու կողմում:

*

* *

Հռենոսի և Ռուրի նահանգների 110 յերի-
տասարդ կոմսոնիստների ֆրանսիական և բել-
գիական դատարանները բանտերն են նետել ոկ-
կուլականտների դեմ մաքառելու համար:

Փարիզի և գափառների կոմյերիստներից մոտ

80 հոգու Ֆրանսիական դատարանները դատապարտել են յերկարատև բանտարկության «գլխավոր գործերի կազմալուծման համար»:

Բայց պայքարը շարունակվում է: Վոչ վոք չի կարող խզել Ֆրանսիայի կոմյերիտմիությունը Գերմանիայի կոմյերիտմիության հետ կապող թելերը:

* * *

Այս նամակը գրել է դեռ անհաստատ ձեռքով տասնևչորս տարեկան Անատոլը, բանտարկված ընկ. Դ.-ի յեղբայրը:

Պատանի կոմսունարը գրում է.

«Նոյեմբերի 14-ին մեզ խուզարկեցին: Խուզարկուհները թերթեցին հորս, յեղբորս և իմ բոլոր գրքերն ու տետրակները: Քրքրեցին սպիտակեղենը, բարձրացան տանիքի տակը, պատռեցին աղվամազի ներքնակը, վոր նրանց կասկածելի թվաց:

Իմ հանրահաշվի դասագրքի մեջ գտան կարլ Լիբկնեխտի, Լենինի և Մարքսի պատկերները, յեղբորիցս տարան յուր հիշատակարանը, ընկ. Տորելի *) յերկու նամակը Համբուրգից և մի

*) Ընկ. Տորելը գերմանական կոմյերիտմիության Համբուրգի կազմակերպության անդամն է. դատապարտվել է մահու պատժի, հետո «ներումն» է ստացել և բանտարկվել է 10 տարով: Ծան. Խմբ.

Թուղցիկ Ռուբրուս գտնվող զինվորներին ուղղված:

Հենինի պատկերի վրա ընկեր Ռադիի ձեռքով գրված էր. «Իմ պատանի բարեկամ Անատոլին, վորին վիճակված ե ասյրել կոմսոնիստական Ֆրանսիայում, Ռադիից, *) վոր պիտի մեռնի նոր կյանքի շեմքում, — իբրև ավանդ, իբրև հիշատակ»:

Սև բեխերով, չար դեմքով մի ժանդարմ, ընկ. Ռադիի մակագրությունը կարդալով, ասաց՝ մատնացույց անելով ինձ.

— Այս բուռակն ել ե «արճճի բզեզի» թեկնածու (խոսքը գնտակի մասին ե):

Յեղբորս իսկույն ձերբակալված հայտարարեցին: Հորս հարցմունքին, թե ինչի համար ե յեղբայրս ձերբակալված, խուզարկուհներն պետք պատասխանեց.

— Դուք ավելի լավ պիտի իմանաք, վորովհետև դուք եք հանցագործներ ստեղծում:

Նոյեմբերի 30-ին յեղբորս դատեցին: Հիմա նա բանտումն ե: Նրան շատ վատ են պահում, — շաբաթը միայն յերկու անգամ են թույլ տալիս զբոսնել բանտի բակումը, կերակրում են

*) Ընկ. Ռադին ընկ. Դորիոյի հետ միասին դատապարտված ե յեղել բանտարկության 10 ամիս ժամանակով: Ծան. Խմբ.

հում հացով և զգվելի մասջրով, — մենք նրան
ոգնում ենք, բայց շատ քիչ, վորովհետև հորս
դուրս են արել գործարանից «գործվածքները
փչացնելու համար», բայց այդ ճիշդ չէ. ընկեր
ները հորս ասել են, վոր հատուկ կարգադրու-
թյուն է յեղել:

Յեղբայրս ինձ յերկու ուրախ տոմսակ է
գրել և գրում է, վոր ինքը լավ է և վոր ան-
հանգիստ չլինինք յուր մասին: Բայց յես գի-
տեմ, վոր նրա վիճակը շատ վատ է: Անցյաշ
տարի, յերբ հայրս հիվանդ էր, և մենք ճա-
չելինք ունենում, նա ծիծաղում ու ասում էր.

— Բոլոր ազնիվ մարդիկ, Անատոլ, վորոշ
ժամանակ պիտի սով տեսնեն, ապա թե վոչ
ազնիվ մարդ չեն լինի:

Ընկեր Ռադին նույնպես բանտումն է հիմա:
Զգիտեմ, սիրելի ժակոբ, վորևե տեղեկություն
ունի՞ք արդյոք յեղբորս մասին. այս պատճառով
եւ գրում եմ այս նամակը: Գուցե կարելի չէ մի
բան անել նրան ոգնելու համար»:

* * *

Փարիզի և գավառների 80 կոմյերիտականներ
տառապումեն ֆրանսիական բանտերում:

Ուրիշ հարյուրավորներ ու հազարավորներ
նույն վիճակին են սպասում:

Բայց պայքարը չի դադարելու և վոչ մի
որ:

Ֆրանսիայի յերիտասարդ գվարդիայի շար-
քերն որ ըստ որե աճում են:

Այդ շարքերը պատրաստ են զոհվելու նոր
կյանքի շեմքում, վորպեսզի միլիոնավոր յերի-
տասարդ Անատոլիներ ապրեն այդ կյանքի սահ-
մանագծի այն կողմը, վորտեղ Կոմմունիստական
Ֆրանսիան է:

ՄԵՆՔ ՄԱՍՍԱ ՅԵՆՔ *)

... «Յես պաշտպանվելու համար չեմ յեկել
այստեղ, վորովհետև յես հանցագործ չեմ և յեր-
բեք ինձ հանցագործ չեմ համարելու: Յես իմ
դասակարգի զավակն եմ, յես պրոլետար եմ:
Կոմմունիստ եմ և Լիտվայի Յերիտ. Կոմմունիստ.
Միուլթյան անդամ:

Յես կռվել եմ իմ դասակարգի շահերի հա-
մար, ձգտել եմ ոգնել նրան ազատվելու այն
խավարի ու դաժան հարստահարուլթյան լծից,
վորի մեջ խարխափում է նա՝ Լիտվայումն հիմա
թագավորող կղերական ռեակցիայի յերեսից:
Յես մաքառել եմ իսկական կյանքի իրավունք-
ների համար, վոր խլել է մեզանից կատաղած

*) Արտասանել է Լիտվայի Կոմ. Յեր. Միուլթյան
անդամ ընկ. Բորիսը զինվորական դատարանում:

բուրժուազիան: Այդ կռիվը սկսված է և ավելի
ու ավելի համակուժ է ճնշված մասսաները, և
վոչ մի խստություն չի կարող կասեցնել այդ
պայքարը, թեկուզ միջնադարյան դաժանու-
թյուններից հարյուրապատիկ չար լինի՝ դեռ
Փարիզի 1871 թ. սպանդն էլ վերադիր:

Միթե գիտակից, ազնիվ բանվորը կարող է
անտարբեր մնալ, յերբ տեսնում է Լիտվայի
բանվոր դասակարգի ահուելի, շարունակ աճող
կարիքը. միթե կարող ենա առանց կարեկցության
լսել, թե ինչպես են հեծում յուր յեղբայրները
գործարաններում ու արհեստանոցներում: Ինչ-
պես չճվվի նրա սիրտը, յերբ տեղեկանում է, թե
ինչպես եք դուք խոշտանգում յուր յեղբայրնե-
րին ձեր բանտերում:

Վոչ, գիտակից բանվորը չի կարող անկարե-
կից մնալ ու չի մնում՝ բանվոր դասակարգի գլխին
թափած տառապանքների ու փորձանքների հան-
դեպ. նա դուրս է գալիս մաքառելու յուր հա-
րստահարիչների դեմ:

Յես Լիտվայի Յերիտասարդության կոմիտե-
նիստական Միության անդամ եմ: Բանվոր յե-
րիտասարդությունը վաղուց է հասկացել և գի-
տե, վոր բանվոր դասակարգը բուրժուազիային
հաղթելով միայն կարող է ազատագրվել, — մար-
դավայել կերպով ապրել ու աշխատել:

Յեւ կոմմունիզմի դրոշի տակ միացող յերի-
տասարդության գվարդիան դուրս ե գալիս մա-
քառելու:

Դուք գաղանաբար եք ձեր հաշիվը տեսնում
բանվորների հետ. ձեր ինկվիզիցիան ուսերիս վրա
յեւ փորձել յես:

Ինձ 17 որ պահեցին ժվալզիբայում, —*)
ինձ ծեծում էյին մտրակներով, բռուցքներով,
ատրճանակ էյին դեմ անում քունքիս, սրտիս:

Զինվորական դատարանն ինձ մահվան դա-
տապարտեց, բայց կոմմունիստին այդ չի վա-
խեցնի. դրանով դուք չեք կարող այն բանի ա-
ռաջն առնել, ինչ վոր լինելու յե, վորովհետեւ մենք
հատ—հատ չենք, մենք—մասսա յենք, մենք
բանվոր դասակարգն ենք:

Մեկը վայր ընկնի, մեկին հաղթեք—նրա
տեղը մի ուրիշը կը բռնի...

Հարյուրավոր ընկերներ տառապում են
բանտերում: Նրանց դեմքերի վրա սովի հետքեր
կան, մարմինների վրա՝ վերքեր, վորոնց լավա-
նալու ժամանակ չի տրվում, ձեռների ու վոտնե-
րի վրա շղթաներ:

Ապա ուր են ձեր սահմանադրության խոս-
տացած «ազատությունները» — խղճի, մամուլի,
գործադուլների, բանվորական շարժման...

*) Ժվալզիբան Լիտվայի «ոխրանկան» ե:

Յեթե մենք «անհող քարոզիչներ» ենք, «ուտոպիստներ», ֆանտազյորներ, ապա ել ինչից եք վախենում:

Վոչ, դուք լավ զիտեք, վոր մեր հրապարակ հանած նշանաբանները, մեր տարածած ուսմունքն ապրում ե մասսաների սրտերում, համապատասխանում ե նրանց շահերին, հրահրում ե նրանց կամքը ձեզ խորտակելու և ճնշելու:

Կոտորեցեք, ջարդեցեք, բռնացեք, բանտարկեցեք, գնդակահարեցեք, բայց իմացեք—սլատմության շոգեշարժը դուք չեք կարող կանգնեցնել:

Հզոր ու սրընթաց, վորպես փոթորիկ, նա բոլոր արգելքները կը ջնջե:

Ինչ վոր լինելու յե, պիտի լինի...

ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

(Բանտարկյալների նամակներից)

Վոգջույն Խալացի կոմյերիսակացներից *)

«Ռեժիմա-Չելի» բանտ, 15 հոկտեմբերի 1923 թ.

Սիրելի ընկերներ,

Ձեր վողջույնը հասավ մեզ և շատ ուրախացրեց: Ամեն անգամ, յերբ մենք մտածում

*) Այս նամակն ուղարկել ե Ռեժիմա-Չելի

ենք այն զոհերի ու տառապանքների մասին,
 վոր ունեցան ուրա ընկերները հաղթություն տա-
 նելու և բազմաթիվ թշնամիներից պաշապանվելու
 համար, մենք տեսնում ենք, վոր մեր համեստ
 զոհաբերությունները համեմատության չեն
 դիմանում: Ձեր համերաշխության ու ձեր ոգ-
 նության գիտակցությունը մեզ համար մեծ մխի-
 թարություն է: Մենք գիտենք, վոր այս պա-
 տերից և ֆաշիզմի լուծի տակ գտնվող մեր յեր-
 կրի սահմաններից դուրս կռվում է մի հզոր
 բանակ, վորի արի զինվորներն են դուք: Մենք
 գիտենք, վոր ինչքան ել յերկար լինի մեզ պա-
 շարող գիշերը, մեզ համար ել առավոտ պիտի
 բացվի: Ընդունեցե՛ք մեր ամենաջերմ վողջույն-
 ներն ու շնորհակալությունը:

Ջուզեպպե Բերտի, քարտուղար իտա-
 լական Կոմյերիտության Կ. Կ.

ՆԱԾԱԿ ՊԼԵՎՆԱՅԻ ԲԱՆՏԻՑ (ԲՈՒԼՂԱՐԻԱ)

...»Այսոր մեզանից շատերը լաց յեղան:
 Այդ մի ահագին ուրախության արտասուներ
 էյին, վորի պատճառն այն գիտակցությունն է,

բանտապետն ի պատասխան Տոմսկի նահանգի
 աշխատավորների՝ Իտալացի ընկերներին ուղղած
 վողջույնի:

Թե մեր ընդհանուր գործը հիմնվում է այնպիսի դասակարգային, աշխատավորների այնպիսի հզոր համերաշխության վրա, վորի առաջ վոչինչ են բուրժուազիայի կատաղի, գազանային տեռորը, նրա բոլոր ջանքերը յուր սիրապետությունը ձեռքից բաց չթողնելու, բոլոր սխտեմն ու տեխնիկան:

Այսոր մենք լուր առանք, վոր Պոլտավայի նահանգի բանվորները, կարմիր զինվորները և գյուղացիները Պլենայի բանտի կալանավորների շեֆությունն են ընդունել, վոր նրանք իրենց աղքատիկ աշխատավարձից փշրանքներ բաժին են հանում բանտարկյալների համար:

Ի՞նչ յերջանկություն է ապրել և մաքառել այս տարիներում, յերբ գրոհ է տրվում կապիտալիստական ամբուլթյունների վրա, յերբ Աշխատանքի հզոր բանակներից մեկը, Ռուսականը, պատառել է թշնամու պողպատյա ճակատը և պատառելուց հետո շտապում է ոգնության հասնելու նրանց, վորոնք դեռ չեն հաղթել, բայց անտարակույս պիտի հաղթեն»...

*

* *

Շատ են այս նամակները: Բավարիայից, Ունգարիայից, Ռումանիայից, Ճապոնիայից, Ամերիկայից, Հնդկաստանից, Եստոնիայից, Լատվիայից...

Ահա տասներկու տարեկան Նոնստի (Գերմանիա) խազխզոցը.

...» Կարլը ձեզ նամակ կը գրի, իսկ իմը վատ է, Հանսն ել է ասոււմ — դուք իմ նամակը չեք ստանա, իսկ ինձ կը ձերբակալեն Կարլի նման: Բայց յեղբայրս ձերբակալված է աղքատ բանավորների համար, նա համարձակ է, յես ել կ'ասեմ նրանց բոլորին. դուք դահիճներ եք:

Կարլը ստացավ ձեր ոգնությունը և խընդրեց, վոր այս նամակը տանեմ «Ռոտե Ֆանեյի» խմբագրատունը»:

Նոնստ Ռ.-ի այս խազխզոցները թռչկոտող տողերով զետեղված են ընկ. Կարլ Ռ.-ի նամակի վերջին յերեսուում, Ռ.-ի, վորին Նբերտի կառավարությունը քցել է Բերլինի բանտը:

ԱՐԵՆԱԳԻՐ ՑԱՆԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե

Կոմյերիտմիության զոհերի ցանկը, տիրող դասակարգերի և սոցիալ-դեմոկրատիայի նողկալի արյունազանգ սխրագործորթյունները, հացադուլները, սովամահության դեպքերը, տանջանքները, խոշտանգումներն ու մահու պատիժները թվելը ամբողջ հատորներ կը լցնեյին:

Ճապոնիայից, վորտեղ յերկրաշարժի ժամանակ դահիճների ձեռքով զազանաբար սպանված

են Կոմյերիտմիության Կենտրոնական Կոմիտեյի
վեց անդամ — Եշուտուրա Կավայ, Զուգիչի, Կա-
տաշիմա, Նայոտշի, Չիրոզո և Սատո,

Չինաստանից, վորի բանտերում տանջանք-
ներից մահացել են տասնավոր պատանի հեղա-
փոխականներ,

Սպանիայից, Իրլանդիայից և Ամերիկայից,
յերկրագնդի բոլոր անկյուններից, վորտեղ տի-
րապետող ե բուրժուազիան և ստորաքարշու-
թյուն ե անում սոցիալ-դեմոկրատիան, մենք ըս-
տանում ենք Կոմյերիտականների դեմ ուղղված
կատաղի տեռորի մասին վկայող փաստագրեր,
Կոմյերիտականների, վորոնց բոլոր յերկրների
բուրժուազիան արդարացի համարում ե այն ույժը,
վոր պիտի պայթեցնե կապիտալիզմի հիմունքը,
ճնշե այժմ տիրապետող դասակարգերը և հա-
մաշխարհային Հոկտեմբերի, համաշխարհային պրո-
լետարիատի դիկտատուրայի միջոցով հաստատե
Աշխատանքի համաշխարհային անանջրպետ Հան-
րապետությունը:

Բայց վոչ միայն արյան զոհերի, վոչ միայն
մահու պատիժների և տանջանքների, վոչ միայն
բանտերի ու առանձնարանների ծանր ուրերի մա-
սին են խռում այդ փաստագրերը:

Նրանք վկայում են, վոր ել այնպիսի ույժ
չկա, վոր ընդունակ լիներ կապիտալիստական

կարգերի խորտակման առաջն առնելու, վոր ա-
ճուժ ու զարգանում են յերիտասարդ գվար-
դիաները, նրանք, վորոնց գործը պիտի լինի
բուրժուազիայի կործանումն ու ճնշումը, վոր
աճում են ու զարգանում՝ հակառակ բուրժու-
ազիայի կատաղի անսահման տեռորին:

Մի բանի մասին ել են խոսում այդ փաս-
տագրերը. Ռուսաստանի կոմյերիտմիության
պարտքի, Խորհրդային Միության բոլոր աշխա-
տավոր յերիտասարդության պարտքի՝ դեռ ևս
կապիտալիզմի ճնշման տակ հեծող յերկրների
հեղափոխական յերիտասարդության հանդեպ:

Այդ պարտքը, բանտարկված, բանտերում
տանջանքների յենթարկվող պատանիներին ու
աղջիկներին ամեն կերպ ոգնություն հասցնելու
պարտքը՝ պիտի հատուցվի:

Յե՛վ կը հատուցվի...



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040337

1043

8-4

A $\frac{I}{4747}$



